ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 70

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ 15 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Ակունք համայնքի ավագանու 2018 թվականի թիվ 15 հերթական նիստի օրակարգը

1. Ակունք համայնքի 2019 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները ու դրույքաչափերը սահմանելու մասին
2. Ակունք համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին
3. Ակունք համայնքի 2019թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին
4.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը որոշելու մասին
5.Ակունքի համայնքապետարանի աշխատակազմի 2019թվականի կառուցվածքը ,աշխատողների քանակը ,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
6. Ակունք համայնքի 2019 թվականի բյուջեի հաստատման մասին
7. Ակունք համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման մասին
8. Հողամասերը օտարելու և կառուցապատման իրավունքով հողամաս տրամադրելու մասին :
9.Ակունք համայնքում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների քննարկման մասին
10.Լիանա Մանեսյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակության փոփոխության մասին
11.Ակունքի համայնքի ավագանու 2017թվականի նոյեմբերի 17-ի N40 որաշման մեջ փոփոխություն կատարելու մասին

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ԱՎԱԳ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԵԽԱԿՅԱՆ ՄԵԽԱԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍԱՄՍՈՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՏԻԳՐԱՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 71-Ն

ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին »օրենքի 9-րդ , 10-րդ , 12-րդ և 14-րդ հոդվածների ,«Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի ,համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել՝Ակունք համայնքի 2019թվականի.

1) տեղական տուրքերի տեսակները ու դրույքաչափերը համաձայն հավելված 1-ի

2) տեղական վճարների տեսակները ու դրույքաչափերը համաձայն 2-4 հավելվածների :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019թվականի հունվարի 1-ից :

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ԱՎԱԳ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԵԽԱԿՅԱՆ ՄԵԽԱԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍԱՄՍՈՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՏԻԳՐԱՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

Հավելված 1
Ակունք համայնքի ավագանու
2018 թվականի դեկտեմբերի <<10>> -ի N <<74-7 որոշման

ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2019 ԹՎԱԿԱՆԻ

Հ/Հ	Տեղական տուրքերի անվանումը	Ավագանու կողմից սահմանված դրույքաչափը (դրամ)	կիրառված գործակիցը և դրույքաչափը
1.	Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝		0,5 գործակից կիրառել Կապուտան, Հատիս, Զովաշեն,Զառ և Սևաբերդ բնակավայրերի համար
	1) հիմնական շենքերի և շինությունների համար՝ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝	15 000 (տասնհինգ հազար)	7500 (յոթ հազար հինգ հարյուր)
	2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝ ա. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար	30 000 (երեսուն հազար)	15 000 (տասնհինգ հազար)
	բ. 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար	50 000 (հիսուն հազար)	25 000 (քսան հինգ հազար)
	գ. 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	50 000 (հիսուն հազար)	25 000 (քսան հինգ հազար)
	դ. 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	100 000 (հարյուր հազար)	50 000 (հիսուն հազար)
	3) ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝ ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	3 000 (երեք հազար)	1500 (հազար հինգ հարյուր)
	բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար	5 000 (հինգ հազար)	2500 (երկու հազար հինգ հարյուր)
2.	Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով		Գործակից կիրառված չէ

	հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝		
	1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն	3 000 (երեք հազար)	3 000 (երեք հազար)
	2) բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,		
	3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.		
3.	Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար		0,5 գործակից
	Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար	5 000 (հինգ հազար)	2 500 (երկու հազար հինգ հարյուր)
4	Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար		0,5 գործակից
	Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար	200 000 (երկու հարյուր հազար)	100 000 (հարյուր հազար)
5	Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ		0,3գործակից

	հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար		
	Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար	60 000 (վաթսուն հազար)	18 000 (տասնութ հազար)
6.	Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար	50 000 (հիսուն հազար)	50 000 (հիսուն հազար)
7.	Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝		
	1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար		0,3 գործակից
	ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	8 500 (ութ հազար հինգ հարյուր)	2 550 (երկու հազար հինգ հարյուր հիսուն)
	բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	10 500 (տասը հազար հինգ հարյուր)	3 150 (երեք հազար հարյուր հիսուն)
	գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	13 500 (տասներեք հազար հինգ հարյուր)	4 050 (չորս հազար հիսուն)
	դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	20 500 (քսան հազար հինգ հարյուր)	6 150 (վեց հազար հարյուր հիսուն)
	ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	25 500 (քսանհինգ հազար հինգ հարյուր)	7 650 (յոթ հազար վեց հարյուր հիսուն)
	զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	45 500 (քառասունհինգ հազար հինգ հարյուր)	13 650 (տասներեք հազար վեց հարյուր հիսուն)
	2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար		0,3 գործակից
	ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	8 500 (ութ հազար հինգ հարյուր)	2 550 (երկու հազար հինգ հարյուր հիսուն)
	բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	10 500 (տասը հազար հինգ հարյուր)	3 150 (երեք հազար հարյուր հիսուն)
	գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի	13 500 (տասներեք	4 050 (չորս հազար

	կազմակերպման դեպքում	հազար հինգ հարյուր)	հիսուն)
	դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	20 500 (քսան հազար հինգ հարյուր)	6 150 (վեց հազար հարյուր հիսուն)
	ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	25 500 (քսանհինգ հազար հինգ հարյուր)	7 650 (յոթ հազար վեց հարյուր)
	զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	45 500 (քառասունհինգ հազար հինգ հարյուր)	13 650 (տասներեք հազար վեց հարյուր հիսուն)
8.	Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ քառակուսի մետրի համար	350 (երեք հարյուր հիսուն)	350 (երեք հարյուր հիսուն)
9.	Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝		Գործակից կիրառված չէ
	1) առևտրի օբյեկտների համար	5 000 (հինգ հազար)	5 000 (հինգ հազար)
	2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար	25 000 (քսանհինգ հազար)	25 000 (քսանհինգ հազար)
	3) բաղնիքների (սաունաների) համար	200 000 (երկու հարյուր հազար)	200 000 (երկու հարյուր հազար)
	4) խաղատների համար	500 000 (հին հարյուր)	500 000 (հին հարյուր)
	5) շահումով խաղերի համար	250 000 (երկու հարյուր հիսուն հազար)	250 000 (երկու հարյուր հիսուն հազար)
	6) վիճակախաղերի համար	100 000 (հարյուր հազար)	100 000 (հարյուր հազար)
10.	Համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝		0,3 գործակից
	1) հիմնական շինությունների ներսում՝		
	ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	5 000 (հինգ հազար)	1 500 (հազար հինգ հարյուր)
	բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	9 000 (իններ հազար)	2 700 (երկու հազար յոթ հարյուր)
	գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	13 500 (տասներեք հազար	4 050 (հինգ հազար հիսուն)

		հինգ հարյուր)	
	դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	17 000 (տասնյոթ հազար)	5 100 (հինգ հազար հարյուր)
	ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	22 000 (քսաներկու հազար)	6 600 (վեց հազար վեց հարյուր)
	զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	33 500 (երեսուներեք հազար հինգ հարյուր)	10 050 (տաս հազար հիսուն)
	2) ոչ հիմնական շինությունների ներսում՝		Գործակից կիրառված չէ
	ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	1 000 (մեկ հազար)	1 000 (մեկ հազար)
	բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	1 500 (հազար հինգ հարյուր)	1 500 (հազար հինգ հարյուր)
	գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	2 500 (երկու հազար հինգ հարյուր)	2 500 (երկու հազար հինգ հարյուր)
	դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	4 500 (չորս հազար հինգ հարյուր)	4 500 (չորս հազար հինգ հարյուր)
	ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	8 500 (ութ հազար հինգ հարյուր)	8 500 (ութ հազար հինգ հարյուր)
	զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	15 500 (տասնհինգ հազար հինգ հարյուր)	15 500 (տասնհինգ հազար հինգ հարյուր)
11.	Համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝		Գործակից կիրառված չէ
	1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար	2 000 (երկու հազար)	2 000 (երկու հազար)
	2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար	3 500 (երեք հազար հինգ հարյուր)	3 500 (երեք հազար հինգ հարյուր)
	3) սոցիալական գովազդի համար	0 (զրո)	0 (զրո)
	4) այլ արտաքին գովազդի համար	1 500 (հազար հինգ հարյուր)	1 500 (հազար հինգ հարյուր)
	5) դատարկ գովազդային վահանակների համար	375 (երեք հարյուր յոթանասունհինգ)	375 (երեք հարյուր յոթանասունհինգ)
	6) եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը	150 (հարյուր հիսուն)	150 (հարյուր հիսուն)
12.	Ակունք համայնքի խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների	100 000 (հարյուր հազար)	100 000 (հարյուր հազար)

	մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար		
13.	Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար	10 000 (տաս հազար)	10 000 (տաս հազար)
14.	Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար	500 000 (հինգ հարյուր հազար)	500 000 (հինգ հարյուր հազար)
15.	Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝		Գործակից կիրառված չէ
	1) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար	2 500 000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար)	2 500 000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար)
	2) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար	5 000 000 (հինգ միլիոն)	5 000 000 (հինգ միլիոն)
	3) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար	7 000 000 (յոթ միլիոն)	7 000 000 (յոթ միլիոն)
	4) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար	10 000 (տասը միլիոն)	10 000 (տասը միլիոն)

Հավելված 2
Ակունք համայնքի ավագանու
2018 թվականի դեկտեմբերի <<10>> -ի N <<71-Ն>> որոշման

ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

N	Աղբահանության վճարի տեսակները	Դրույքաչափերը (դրամ)
1.	**Կենցաղային աղբի համար՝**	
1)	անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և /կամ/ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական	150 (հարյուր հիսուն)
2.	**Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝**	
1)	ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար	1 500(հազար հինգ հարյուր)
2)	Աղբը ինքնուրույն հավաքելու և տեղափոխելու համար համար թույլտվության վճար	2 000 (երկու հազար)

	I. Առևտրի օբյեկտներ		
1.	Առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինանյութերի մասով	1քմ	50 (հիսուն)
2.	Հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով	1քմ	20 (քսան)
	II. Գրասենյակներ		
1.	Գիտահետազոտական, նախագծային ինժեներական ինստիտուտներ և այլ հասարակական շինությունների մասով	1քմ	3 (երեք)
	III. Բժշկական հաստատություններ		
1.	Դեղատներ	1քմ	50 (հիսուն)
2.	Առողջապահական շինություններ	1քմ	3 (երեք)
	IV. Ավտոտրանսպորտի սպասարկման օբյեկտներ		
1.	Ավտոարհեստանոցներ, բենզալցակայաններ, գազալցակայաններ	1քմ	50 (հիսուն)
2.	Ավտոլվացման կետեր	1քմ	50 (հիսուն)
3.	Ավտոկայանատեղիներ	1քմ	3 (երեք)
	V. ՈՒսումնական հաստատություններ		
1.	Դպրոցներ, մանկապարտեզներ	1 քմ	3 (երեք)
	VI. Կենցաղային սպասարկման ձեռնարկություններ		
1.	Վարսահարդարման սրահներ	1քմ	50 (հիսուն)
2.	Գործարաններ	1քմ	3 (երեք)
3.	Հացա-բուլկեղենի արտադրության տարածքներ	1քմ	50 (հիսուն)

Հավելված 3
Ակունք համայնքի ավագանու
2018 թվականի դեկտեմբերի <<10>> -ի N <<71-Ն>> որոշման

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Ակունք համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել մեկ երեխայի համար՝ 5 000 (հինգ հազար) դրամ:

Հավելված 4
Ակունք համայնքի ավագանու
2018 թվականի դեկտեմբերի <<10>> -ի N <<74-Ն>> որոշման

ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

N	Տեղական վճարի տեսակները	Դրույքաչափերը (դրամ)
1	համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար	5 000 (հինգ հազար)
2.	ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար	5 000 (հինգ հազար)
3.	ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար	5 000 (հինգ հազար)
4.	համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար	5 000 (հինգ հազար)
5.	համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար	5 000 (հինգ հազար)
6.	համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար	5 000 (հինգ հազար)
7.	համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ դրամ փոխհատուցման վճար	1000 /մեկ հազար/
8.	Ակունքի համայնքի Զառ բնակավայրի համայնքում փաստացի բնակվող ընտանիքի համար, համայնքի կողմից մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել	ամսական 1000(մեկ հազար)
9.	համայնքում փաստացի գործունեություն իրականացնող խոշոր գյուղացիական տնտեսությունների (անասնապահական ֆերմաների) համար	ամսական 2000 (երկու հազար)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 72-Ն

ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի ,համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել Ակունք համայնքի կողմից 2019թվականին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019թվականի հունվարի 1-ից :

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ԱՎԱԳ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԵԽԱԿՅԱՆ ՄԵԽԱԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍԱՄՍՈՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՏԻԳՐԱՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

Հավելված
Ակունք համայնքի ավագանու
2018 թվականի դեկտեմբերի <<10>> -ի
N<<70>> - Ն որոշման

ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Հ/Հ	Վճարի տեսակը	Դրույքաչափը (դրամ)
1.	Հողամասերի օտարման կամ օգտագործման տրամադրման փաստաթղթերի կազմման համար	5 000 (հինգ հազար)
2.	Օրինականացված ինքնակամ կառույցների օտարման կամ օգտագործման տրամադրման փաստաթղթերի կազմման համար	5 000 (հինգ հազար)
3.	Բնակելի կամ ոչ բնակելի տարածքների օտարման և օգտագործման տրամադրման փաստաթղթերի կազմման համար	10 000 (տաս հազար)
4.	**Շինությունների համար՝գործառնական և նպատակային նշանակության փոփոխության փաստաթղթերի կազման համար**	
	1) Ֆիզիկական անձանց համար՝ 5 000 (հինգ հազար) դրամ, գումարած յուրաքանչյուր 1 քառակուսի մետրի համար	50 (հիսուն)
	2) Իրավաբանական անձանց համար՝ 10 000 (տաս հազար) դրամ, գումարած յուրաքանչյուր 1 քառակուսի մետրի համար	50 (հիսուն)
5.	**Հողամասերի համար՝ գործառնական և նպատակային նշանակության փոփոխության փաստաթղթերի կազման համար**	
	1) Ֆիզիկական անձանց համար՝ 5 000 (հինգ հազար) դրամ, գումարած յուրաքանչյուր 1 քառակուսի մետրի համար	50 (հիսուն)
	2) Իրավաբանական անձանց համար՝ 10 000 (տաս հազար) դրամ, գումարած յուրաքանչյուր 1 քառակուսի մետրի համար	100 (մեկ հարյուր)
6.	**Հասցեի տրամադրման համար**	
	1)Նոր հացեի տրամադրման համար	3 000 (երեք հազար)
	2)Հասցեների բաժանման կամ միավորման համար	3 000 (երեք հազար)
7.	**Հատակագծերի ուսումնասիրման և հաստատման համար**	3 000 (երեք հազար)
8.	**Իրադրության հատակագծի տրամադրում**	1000(մեկ հազար)
9.	**Անշարժ գույքի վերաբերյալ տեղեկանքի յուրաքանչյուր միավորի տրամադրման համար**	500(հինգ հարյուր)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 73

ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի , ի կատարումն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018 թվականի հունվարի 12-ի թիվ 01/16.2/80-18 հանձնարարականի ,հիմք ընդունելով համայնքի ավագանու 2018 թվականի ապրիլի 10-ի թիվ 20-Ն որոշումը ,համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել Ակունք համայնքի 2019 թվականի տարեկան աշխատանքային պլանը համաձայն հավելվածի :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից :

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ԱՎԱԳ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԵԽԱԿՅԱՆ ՄԵԽԱԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍԱՄՍՈՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՏԻԳՐԱՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 74

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, 28-րդ հոդվածի 1-ին մասի 3-կետով, համայնքի ավագանին որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունքի համայնքի ղեկավարի վարձատրության չափը՝ պաշտոնային դրույքաչափը սահմանել ամսական 400 000 (չորս հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, որը կազմում է Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնային դրույքաչափի 60.47 տոկոսը :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից :

Համայնքի ավագանու ամնդամներ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ԱՎԱԳ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԵԽԱԿՅԱՆ ՄԵԽԱԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍԱՄՍՈՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՏԻԳՐԱՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 75-Ա

ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ,ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի ,համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Ակունքի համայքապետարանի աշխատակազմի կառուցվածքը , աշխատողների քանակը ,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելված 1 և հավելված 2-ի :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից :

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ԱՎԱԳ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԵԽԱԿՅԱՆ ՄԵԽԱԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍԱՄՍՈՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՏԻԳՐԱՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

Հավելված1
Ակունք համայնքի ավագանու
2018_թ.դեկտեմբերի 10 -ի N 75 –Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

1. Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժին

Հավելված 2
Ակունքի համայնքի ավագանու
2018 թվականի դեկտեմբերի 10-ի
N 75 - Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատողների քանակը՝ 48
2. Աշխատակազմի հաստիքացուցակը
և պաշտոնային դրույքաչափերը

Հ/հ	Հաստիքի անվանումը	Պաշտոնի ծածկագիրը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Հավելումը	Հավելավճարը	Աշխատավարձի չափը
	Քաղաքական պաշտոններ						
1	Համայնքի ղեկավար		1	400 000			400 000
2	Համայնքի ղեկավարի տեղակալ		1	210 000			210 000
	Հայեցողական պաշտոններ						
3	Համայնքի ղեկավարի օգնական		1	170 000			170 000
4	Համայնքի ղեկավարի խորհրդական		1	250 000			250 000
5	Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար		1	150 000			150 000
	Վարչական պաշտոններ						
6	Վարչական ղեկավար		4	250 000			1 000 000
7	Վարչական ղեկավար		3	180 000			540 000
	Համայնքային ծառայության պաշտոններ						
7	Աշխատակազմի քարտուղար	1.2-1	1	230 000			230 000
8	Աշխատակազմի գլխավոր մասնագետ	2.3-2	1	188 000			188 000
9	Աշխատակազմի գլխավոր մասնագետ	2.3-3	1	188 000			188 000
10	Առաջատար մասնագետ	3.1-2	1	160 000			160 000
11	Առաջատար մասնագետ	3.1-3	1	160 000			160 000
12	Առաջատար մասնագետ	3.1-4	1	160 000			160 000
13	Առաջին կարգի մասնագետ	3.2-5	1	144 000			144 000
14	Առաջին կարգի մասնագետ	3.2-6	1	144 000			144 000
15	Առաջին կարգի մասնագետ	3.2-7	1	144 000			144 000
16	Առաջին կարգի մասնագետ	3.2-8	1	144 000			144 000

	Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժին						
17	Բաժնի պետ	2.1-1	1	208 000			208 000
18	Գլխավոր մասնագետ	2.3-1	1	188 000			188 000
19	Առաջատար մասնագետ	3.1-1	1	160 000			160 000
20	Առաջին կարգի մասնագետ	3.2-1	1	144 000			144 000
21	Առաջին կարգի մասնագետ	3.2-2	1	144 000			144 000
22	Առաջին կարգի մասնագետ	3.2-3	1	144 000			144 000
23	Առաջին կարգի մասնագետ	3.2-4	1	144 000			144 000
24	Երկրորդ կարգի մասնագետ	3.3-1	1	129 000			129 000
25	Երկրորդ կարգի մասնագետ	3.3-2	1	129 000			129 000
26	Երկրորդ կարգի մասնագետ	3.3-3	1	129 000			129 000
	Տեխնիկական սպասարկման անձնակազմ						
27	Մշակույթի աշխատող		5	100 000			500 000
28	Հավաքարար		5.5	80 000			440 000
29	Վարորդ		1	110 000			110 000
30	Պահակ		1	40 000			40 000
	Քաղաքացիական աշխատանք						
31	Անասնաբույժ		4	80 000			320 000
	ԸՆԴԱՄԵՆԸ		48				7 311 000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 76-Ն

ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի ,«Բյուջետային համակարգի մասին » օրենքի 32-րդ հոդվածի հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը ,համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Ակունք համայնքի 2019 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի:
2. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում գործառնական և տնտեսագիտական դասակարգմամբ կատարել վերաբաշխումներ , որոնց հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չպետք է գերազանցի տվյալ տարվա բյուջեի սույն որոշմամբ սահմանված գործառնական և տնտեսագիտական դասակարգմամբ չափաքանակների 20% -ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

Ավագանու անդամներ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ԱՎԱԳ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԵԽԱԿՅԱՆ ՄԵԽԱԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍԱՄՍՈՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՏԻԳՐԱՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 77

ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 18-րդ 1-ին մասի 20-րդ կետի ,«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին » օրենքի 10-րդ 13-րդ հոդվածների ,համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել Ակունք համայնքի.
1) աղբահանության իրականացման կարգը համաձայն հավելված 1-ի ,
2) սանիտարական մաքրման սխեման համաձայն հավելված 2-ի ,
3) աղբահանության վճար վճարողների հաշվառման կարգը համաձայն հավելված 3-ի :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019թվականի հունվարի 1-ից :
Համայնքի ավագանու անդամներ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ԱՎԱԳ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԵԽԱԿՅԱՆ ՄԵԽԱԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍԱՄՍՈՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՏԻԳՐԱՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՌՈՒԲԵՆՅԱՆ

Հավելված 3

Ակունքի համայնքի ավագանու
2018 թվականի դեկտեմբերի 10 –ի N 77 որոշման

ԿԱՐԳ
ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգը նպատակ ունի կարգավորել Ակունքի համայնքի տարածքում աղբահանության կազմակերպման հետ կապված հարաբերությունները:
2. Համայնքի տարածքում աղբահանությունը պարտադիր և պարբերաբար իրականացվող աշխատանք է, որը իր ուժերով և տեխնիկական միջոցներով իրականացնում է գյուղապետարանը՝ օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնների և նորմերի պահանջների պահպանմամբ, որպես սկզբունք ընդունելով՝
   1) Մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական (վտանգավոր) ներգործության նվազեցումը և չեզոքացումը:
   2) բնակության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմանների ապահովումը,
   3) տարածքների աղտոտման, աղբակույտերի առաջացման անթույլատրելիությունը և տարածքների մաքրումը աղբից,
   4) աղբահանության վերաբերյալ տեղեկատվության մատչելիության և հանրային իրազեկվածության ապահովումը,
   5) մաքրման աշխատանքների մեքենայացումը:
3. Սույն կարգի իմաստով «Աղբ» հասկացությունը իր մեջ ընդգրկում է համայնքի բնակչության կենցաղային կարիքները հոգալու արդյունքում առաջացած, ֆիզիկական, քիմիական և կենսաբանական հատկանիշներով բնակչության կողմից կենցաղային կարիքները հոգալու արդյունքում արտադրված թափոններից չտարբերվող, այն մնացորդները, որոնք կորցրել են իրենց սկզբնական սպառողական հատկությունները ու տեղում չեն վերօգտագործվում, ինչպես նաև համայնքի տարածքի սանիտարական մաքրման արդյունքում կուտակված թափոնները:
4. Համայնքապետարանը մատուցում է աղբի հավաքման, փոխադրման, հեռացման և/կամ թաղման ծառայությունը:
5. Համայնքի տարածքում աղբահանության կազմակերպումն իրականացվում է ինքնաթափ բեռնատարի և անվավոր տրակտորային փոխադրամիջոցների միջոցով, որոնք համապատասխանում են օրենսդրությամբ հաստատված նորմերին: Աղբահանությունը համայնքում իրականացվում է սահմանված ներհամայնքային ճանապարհներով և մայրուղիներով (համաձայն աղբահանության սխեմայի):
6. Համայնքապետարանը աղբը տեղափոխում է աղբավայր, որը գտնվում է համայնքի հսկողության ներքո:

7. Աղբամանները տեղադրվում են համայնքի նախատեսված վայրերում, այնպես, որ համայնքապետարանը հնարավորություն ունենա պատշաճ հավաքել և տեղափոխել աղբը:
8. Աղբի համար նախատեսված վայրում օգտագործելի բժշկական նյութեր, դեղորայք, դեղահաբեր, կաուստիկ թթուներ, ներկանյութեր, մեքենաների յուղեր, ցանկացած տեսակի հեղուկներ, պայթուցիկ նյութեր, ասբեստ կամ նմանատիպ այլ վտանգավոր նյութեր կամ այլ վտանգավոր թափոններ (ինչպիսի սահմանում է «Թափոնների մասին» օրենքում, ինչպես նաև իրենց բնակարանում կամ բնակելի տանը օգտագործված այնպիսի իրեր, առարկաներ, նյութեր կամ այլ թափոններ տեղադրելու դեպքում, երբ համապատասխան բժշկական ծառայությունների կողմից հայտնաբերվել են վարակիչ հիվանդություններ կամ այլ համաճարակային ինֆեկցիաներ), տեղադրող անձինք պատասխանատվություն են կրում օրենսդրությամբ սահմանված կարգով:
9. Ֆիզիկական և իրավաբանական անձիք, մասնավորապես համայնքի բնակիչները, օրենսդրությամբ սահմանված կարգով և հանրորեն ճանաչված և ընդունված սանիտարական և հակահամաճարակային կանոնների համաձայն, պարտավորվում են մաքուր պահելու համայնքի ցանկացած հանրային տարածքը՝ փողոցները, մայթերը այլ հանրային տարածքներ, ինչպես նաև սեփականության իրավունքով իրենց պատկանող հանրային տարածքներ, առանց համապատասխան թույլտվությունների չայրել համապատասխան աղբը (պլաստիկ նյութերը և առարկաները, այդ թվում՝ պոլիէթիլենե տոպրակները և շշերը,ներկանյութերը և յուղերը, ռետինե և կաշվե իրերը և նյութերը, այլ վտանգավոր թափոնները), որպեսի դրանք պատճառ չհանդիսանան հանրային տարածքներում աղբի՝ չնախատեսված վայրում թափման, կուտակման և պահման համար:
10. Համայնքի ղեկավարը իր կարգադրությամբ նշանակում է աղբահանության կամակերպման ամենօրյա աշխատանքների համար պատասխանատու անձ:, որը արձագանքում է ստացված հաղորդումներին, բողոքներին, նամակներին, վերահսկողություն է իրականացնում մատուցվող ծառայության ընթացքի, որակի, շրջակա միջավայրի պահպանման սահմանված նորմերի, սանմաքրման սխեմաների, աշխատանքային գրաֆիկի պահպանման նկատմամբ:
11.Խախտումներ հայտնաբերելու դեպքում ֆիզիկական և իրավաբանական անձիք պարտավոր են այդ մասին մինչև հաջորդող աշխատանքային օրվա վերջ գրավոր տեղեկացնել համայնքապետարան: Սահմանված ժամկետում չտեղեկացնելու դեպքում կորցնում են իրենց հայտնաբերած խախտումները վկայակոչելու իրավունքը:
12.Համաքապետարանը ծառայության մատուցման ընթացքում պարտավոր է կատարել տրված ցուցումները 3 աշխատանքային օրվա ընթացքում, եթե դրանք դուրս չեն գալիս կնքված պայմանագրի շրջանակներից:
13.Համայքապետարանը պարտավոր է՝

1) Ապահովել աղբի հավաքումն ու փոխադրումը համապատասխան փոխադրամիջոցով մինչև սահմանված աղբավայր,

ժամանակահատվածում՝ սահմանված աշխատանքային գրաֆիկին համապատասխան:

14.Կազմակերպությունների և առևտրի օբյեկտների աղբահանությունը պետք է կատարվի հնարավորինս համայնքի բնակելի թաղամասերի սպասարկմանը զուգահեռ՝ ըստ կողմերի միջև կնքված պայմանագրով սահմանված աղբահանության կարգին համապատասխան:

15.Համայնքի բնակիչները և իրավաբանական անձանց աշխատակիցները պարտավոր են՝

1) Աղբը աղբանների մեջ լցնել սահմանված ձևով,
2) Աղբանների մեջ չլցնել վտանգավոր թափոններ, շինարարական, մեծածավալ/ մեծամասշտաբ աղբ, որոնք իրենց ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական հատկություններրով վտանգավոր են մարդու առողջության և շրջակա միջավայրի համար և պահանջում են դրանց հետ վարվելու հատուկ մեթոդներ, եղանակներ, միջոցներ,
3) Չտեղափոխել, չտեղափոխել կամ շրջել աղբամանները.
4) Սահմանված ժամկետում և սահմանված դրույքաչափով վճարել աղբահանության վճարը:

Հավելված 2
Ակունքի համայնքի ավագանու
2018թ դեկտեմբերի 10-ի N 77 որոշման

ՍԽԵՄԱ
ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ

1. Ակունքի համայքի տարածքի սանիտարական մաքրումը ներառում է՝ համայքի կազմի մեջ մտնող բնակավայրերի՝Ակունքի,Նոր գյուղի,Կոտայքի ,Կապուտանի ,Հատիսի,Զովաշենի ,Սևաբերդի, Զառի ընդհանուր օգտագործման տարածքների(փողոցների ,պուրակների ,բակերի,մայթերի,կամուրջների ,սիզամարգերի և ընդհանուր օգտագործման այլ տարածքների) մաքրումը աղբից ,տերևակույտերից ,փոշուց,կենդանիների դիակներից ,ձյունից և սառույցից:
2.Սանիտարական մաքրման ենթակա տարածքներն են՝Ակունքի համայքապետարանի տարածքը ,վարչական բնակավայրերի ղեկավարների նտավայրերի տարածքները ,համայնքի փողոցները , համայքի հուշարձանների տարածքները,համայքի մշակույթային ,դպրոցական և նախադպրոցական հաստատությունները ,սննդի հասարակական օբյեկտները ,առևտրի կետերը,կենցաղային սպասարկման օբյետները , Նոր գյուղ – Կոտայք -Կապուտան –Հատիս-Զովաշեն , Կոտայք – Ակունք- Զառ-Սևաբերդ ճանապարհահատվածները ,համայնքի սելավատարները ,ջրատարները ,ընդհանուր օգտագործման այլ տարածքները :
3. Մոտավոր հաշվարկով համայնքում առաջացող աղբի ծավալը կազմում է 112 մետր խորհանարդ ամսական :
4 .Համայնքում աղբահանությունը իրականացվում է ինքնաթափ մեքենայի և անվավոր տրակտորնրին կցված սայլակների միջոցով :
5. Աղբատար մեքենաների երթուղին ընդգրկում է սանիտարական մաքրման ենթակա տարածքները՝Ակունքի համայքապետարանի տարածքը ,վարչական բնակավայրերի ղեկավարների նտավայրերի տարածքները ,համայնքի փողոցները , համայքի հուշարձանների տարածքները,համայքի մշակույթային ,դպրոցական և նախադպրոցական հաստատությունները ,սննդի հասարակական օբյեկտները ,առևտրի կետերը , Նոր գյուղ –Կոտայք -Կապուտան –Հատիս-Զովաշեն , Կոտայք – Ակունք- Զառ-Սևաբերդ ճանապարհահատվածները ,համայնքի սելավատարները ,ջրատարները ,ընդհանուր օգտագործման այլ տարածքները ,աղբավայր կատարելով 160 կմ վազք:

Հավելված3
Ակունքի համայնքի ավագանու
2018 թվականի դեկտեմբերի 10-ի N 77 որոշման

ԿԱՐԳ

ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

1.Ակունք համայնքում աղբահանության վճար վճարողներ են անշարժ գույքի, այդ թվում՝ բնակելի շինության սեփականատեր համարվող կամ որևէ այլ իրավունքով այդ գույքը տիրապետող կամ օգտագործող ֆիզիկական անձինք, անհատ ձեռնարկատերերը, իրավաբանական անձինք, հիմնարկները, տեղական ինքնակառավարման մարմինները, իսկ պետական կամ համայնքային սեթականություն համարվող անշարժ գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման հիմքով քաղաքացու կամ իրավաբանական անձի կողմից տիրապետման դեպքում՝ վարձակալը, անհատույց օգտագործողը:

2.Ակունք համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառումը և գրանցումը, աղբահանության դիմաց վճարների հաշվարկումը, վճարների գանձումն ու դրանք համայնքի բյուջեի համապատասխան հաշվին մուտքագրումը իրականացնում է համայնքապետարանը:

1. Համայքապետարանը վարում է հաշվառման մատյաններ.
   1) Ֆիզիկական անձանց համար, որտեղ որտեղ գրանցվում են անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և/կամ բնակվող յուրաքանչյուր բնակչի տվյալները, որոնք հավաստվում են անձը հաստատող փաստաթղթով: Այդ մատյաններում գրանցվում են նաև ըստ հասցեի բնակելի նշանակության անշարժ գույքի տվյալները՝ սեփականության կամ վարձակալության /օգտագործման/ իրավունքը հաստատող փաստաթղթի /վկայականի/ հիման վրա.
   2) Աղբահանության վճար վճարողների հետ կնքված պայմանագրի գրանցման համար:

2. Աղբահանության վճար վճարողների հաշվառման տվյալների հիման վրա Ակունքի համայնքապետարանը նրանց հետ կնքում է պայմանագրեր: պայմանագրերում փոփոխություններ և լրացումներ կատարվում են աղբահանության վճարների դրույքաչափերի, աղբահանության պայմանների, աղբահանության վճար վճարողների հաշվառման տվյալների փոփոխման դեպքում:

3. Աղբահանության վճար վճարողների հետ կնքված պայմանագրի մեկ օրինակը պահվում է համայնքապետարանում:
4. Յուրաքանչյուր տարվա հունվար ամսին համայնքապետարանի համապատասխան աշխատակիցների կողմից ստուգվում է աղբահանության վճար վճարողների հաշվառման մատյաններում գրանցված տվյալների համապատասխանությունը առկա վիճակին և կատարված աշխատանքների արդյունքների մասին՝ մինչև փետրվարի 5-ը, համայնքի ղեկավարին է ներկայացվում հաշվետվություններ:

Հաշվետվությունների հիման վրա հաշվառման մատյաններում կատարվում են փոփոխված տվյալների համապատասխան գրանցումներ, որոնք հիմք են հանդիսանում աղբահանության վճար վճարողների հետ նոր պայմանագրի կնքման կամ կնքված պայմանագրերում փոփոխություններ և/ կամ լրացումներ կատարելու համար:

5. Աղբահանության վճար վճարողները՝ իրենց հաշվառման տվյալների փոփոխության (հաշվառված կամ բնակվող անձանց թվի փոփոխություն) դեպքում պարտավոր են փոփոխության կատարման օրվանից 10-օրյա ժամկետում հայտնել համայնքապետարանին՝ կնքված պայմանագրերում համապատասխան փոփոխություն կատարելու համար:
6. Աղբահանության վճարի հաշվարկման համար հիմք է հանդիսանում կնքված պայմանագիրը:
7. Աղբահանության վճարի հաշվարկման հաշվետու ժամանակահատվածը օրացուցային ամիսն է:
8. Յուրաքանչյուր ամսվա համար աղբահանության վճարը պետք է վճարվի կանխիկ կամ անկանխիկ՝ մինչև հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:
9. Համայնքապետարանի կողմից յուրաքանչյուր ամսվա աղբահանության վճարի հավաքագրված գումարները համայնքի բյուջեի համապատասխան հաշվին մուտքագրվում են մինչև հաջորդող ամսվա 5-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 78

ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի, 48.1հոդվածի , «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21 կետի,Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման կարգի 34 և 35-րդ կետերի, համայնքի օգտագործման սխեմային համապատասխան , համայնքի ավագանին որոշում է՝

1. Կոտայքի մարզի Ակունք համայնքի Կոտայք բնակավայրի վարչական տարածքում գտնվող Աշոտ Զեմլյակի Առաքելյանին հատկացված 6-րդ փողոց թիվ 21 հասցեի , 0.05 հա բնակելի կառուցապատման հողամասի 20%-ից ավել օգտագործվող 250 քառակուսի մետր հողամասը ուղղակի վաճառքով օտարել հողամասը փաստացի օգտագործողին ՝Աշոտ Զեմլյակի Առաքելյանին և հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքի 30%-ի չափով՝ 93150 դրամ:
2. Կոտայքի մարզի Ակունք համայնքի Կապուտան բնակավայրի վարչական տարածքում գտնվող Նարեկ Սամվելի Ենոքյանին հատկացված 3-րդ փողոց թիվ 10 հասցեի , 0.05 հա բնակելի կառուցապատման հողամասի 20%-ից ավել օգտագործվող 166.5 քառակուսի մետր հողամասը ուղղակի վաճառքով օտարել հողամասը փաստացի օգտագործողին ՝Նարեկ Սամվելի Ենոքյանին և հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքի 30%-ի չափով՝ 17083դրամ:
3. Համայնքային սեփականություն հանդիսացող 07-061-0012-0006 ծածկագրով , Ակունք համայնք գյուղ Սևաբերդ 1-ին փողոց թիվ 1/1,

0.00812 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական հողամասը ուղղակի վաճառքով օտարել և ուղղակի վաճառքի գին սահմանել 81.2 X 222=18030 դրամ

5.Թույլատրել համայնքի ղեկավարին Ակունք համայքի Սևաբերդ բնակավայրի 16 հա 5-րդ կարգի արոտը, ծածկագիր՝ 07-061-156-039, աճուրդ - վաճառքի միջոցով օտարել և սահմանել մեկնարկային գին3.2 X 25 =80000X 16 =1 280 000 x 80% =1 024 000 դրամ :

Համայնքի ավագանու անդամեր

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ԱՎԱԳ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԵԽԱԿՅԱՆ ՄԵԽԱԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍԱՄՍՈՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՏԻԳՐԱՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՌՈՒԲԵՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 79

ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետի ,հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 2018թվականի սեպտեմբերի 27-ի N 282-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից 2015թվականի մայիս ամսից մինչև 2018թվականի հոկտեմբեր ամիսը ժամանակահատվածի համար իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը ,համայնքի ավագանին որոշում է՝

1. Ընդունել ի գիտություն Կոտայքի մարզպետարանի կողմից իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը:
2. Առաջարկել համայքի ղեկավարին օրենքով սահմանված ժամկետում ձեռնարկել միջոցներ արձանագրված թերությունները և խախտումները վերացնելու և շտկելու համար:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ԱՎԱԳ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԵԽԱԿՅԱՆ ՄԵԽԱԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍԱՄՍՈՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՏԻԳՐԱՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 80

ԼԻԱՆԱ ԱՐՄԵՆԻ ՄԱՆԵՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 31-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 1028-Ն որոշումը և Լիանա Մանեսյանի դիմումը.ավագանին որոշում է

1.Լիանա Մանեսյանին պատկանող /ծածկագիր 07-049-0216-0061/ 0,0103հա հողամասի նպատակային նշանակությունը համարել փոփոխված՝բնակավայրերի բնակելի կառուցապատման կատեգորիա:
2.0,0103հա հողամասի նպատակային նշանակությունը փոփոխությունը ներառել համայնքի հողերի հաշվեկշռում:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ԱՎԱԳ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԵԽԱԿՅԱՆ ՄԵԽԱԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍԱՄՍՈՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՏԻԳՐԱՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 81

ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՆԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի N 40 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին » օրենքի 33-րդ հոդվածի ,Ակունքի համայքի ավագանին որոշում է՝

1.Ակունք համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 17-ի « Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի Ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման և դրանց վերաբերյալ համայնքի ավագանուն եզրակացություններ տալու նպատակով ստեղծվող մշտական գործող հանձնաժողովների անհատական կազմերի մասին »N 40 որոշման մեջ կատարել փոփոխություն .
1) որոշման 2-րդ կետի «ա» ենթակետի «Կարեն Մնացականյան » բառերը փոխարինել «Մեխակ Մեխակյան» բառերով :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից :

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ԱՎԱԳ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԵԽԱԿՅԱՆ ՄԵԽԱԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍԱՄՍՈՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՏԻԳՐԱՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**